ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» սեպտեմբերի 2020թ. ՆՄՈ/ 456-2020

ք. Արմավիր

ԴԻՏԱՐԿՈՂ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք համայնքի բազմաբնակարան շենքում 2020թվականի սեպտեմբերի 24-ին բռնկված հրդեհի հետևանքով համայնքի տուժած բնակչությանը պատճառված գույքային վնասը փոխհատուցելու նպատակով և հիմք ընդունելով Պտղունք համայնքի ղեկավարի՝ ՀՀ Արմավիրի մարզպետին ուղղված 2020 թվականի սեպտեմբերի 25-ի N212 գրությունը.

Որոշում եմ՝

1. Ստեղծել դիտարկող փաստահավաք աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ (Կ. Գրիգորյան) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո նախատեսված աշխատանքներն ավարտել 5 աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ (Վ. Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ *Հ. Մաթևոսյան*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, Ֆաքս 0237/2-42-62, էլ. փոստ՝ aghek.armavir@mta.gov.am

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.12.2020 17:54:27 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, Ֆաքս 0237/2-42-62, էլ. փոստ՝ aghek.armavir@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի դեկտեմբերի 04 -ի
N /ՄՈ/456 - որոշման

Աշխատանքային խմբի կազմը

Աշխատանքային խմբի ղեկավար՝	Կ. Գրիգորյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ա. Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Ռ. Երվանդյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար
Ռ. Սահակյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ ճարտարագետ
Ա. Ղորղանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Կ. Արթենյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Սևակ Ազիզյան Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Պտղունք
համայնքի ավագանու անդամ
/համաձայնությամբ/

Սևակ Հովհաննիսյան Հայաստանի Հարապետության
ԱԻՆ Արմավիրի ՄՓԾ ԲՊԲ ավագ
հրահանգիչ, փ/ծ մայոր
/համաձայնությամբ/

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.12.2020 17:22:47 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝
Ա. Հովհաննիսյան